

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՆՆԱ ՎԱՀԱՆԻ ՄԱՀԱԿՑԱՆ**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՑԻՆ ԵՎ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ  
(Զափումների միասնականության ապահովման համակարգի տեքստերի  
հիման վրա)**

**Ժ.02.07-«Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Ա. Վ. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ. Գ. Պ., պրոֆեսոր Ն. Լ. Հարությունյան  
Բ. Գ. Թ. Լ. Ս. Աղաջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2017թ. հունիսի 28-ին՝ ժամը 13:30-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի

Գիտական քարտուղար

Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Տեխնիկական տեղեկատվությունը միշտ էլ առանձնահատուկ արժեք է ունեցել ողջ մարդկային հասարակության համար, և նման տեղեկատվության փոխանցումը, հատկապես թարգմանության միջոցով, եղել է քաղաքակրթությունների, գիտության և տեխնոլոգիայի զարգացման գրավականը: Հատկապես արդի ժամանակաշրջանում գրեթե ամեն ինչ հիմնված է գիտության և նոր տեխնոլոգիաների վրա, ահա թե ինչու գիտական և տեխնիկական թարգմանության կարևորությունը գնալով աճում է:

Ատենախոսության ***ուսումնասիրության առարկան*** տեխնիկական տեքստերի, մասնավորապես՝ չափումների միասնականության ապահովման համակարգին վերաբերող տեքստերի, այն կառուցվածքային և լեզվաոճական տարրերն են, որոնց պատշաճ վերարտադրությունը թարգմանական գործընթացում առանձնահատուկ ուշադրության է արժանի և մեծ դեր ունի համարժեք թարգմանության ապահովման համար:

Թեմայի ***արդիականությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ տեխնիկական թարգմանությունը դեռևս շարունակում է մնալ թարգմանության տեսության ամենախրթին և վիճելի հարցերից մեկը, որը մշտապես կարիք ունի նոր լուծումների և մոտեցումների: Եթե գեղարվեստական թարգմանության խնդիրներին անդրադարձող աշխատությունների քանակը բավականաչափ մեծ է, ապա տեխնիկական թարգմանության հիմնահարցերի ուսումնասիրության մեջ դեռևս լուրջ լրացումների անհրաժեշտություն կա: Թարգմանության միջոցով տեխնիկական տեքստի լեզվաոճական առանձնահատկությունների վերարտադրության հնարավորությունները լուրջ և մանրակրկիտ քննության կարիք ունեն, ինչը կհանգեցնի թարգմանական փորձի ընդհանրացմամբ՝ որոշակի օրինաչափությունների վերհանմանն ու դրանց հիման վրա թարգմանություններին ներկայացվող պահանջների մշակմանը:

Տեխնիկական տեղեկատվության փոխանցումը, կամ այլ կերպ ասած՝ տեխնիկական հաղորդակցությունը խոր արմատներ ունի: Տեխնիկական հաղորդակցությունն իրականացվել է դեռ մեր թվարկությունից առաջ և ժամանակի ընթացքում գնալով ավելի ու ավելի է զարգացել: Տեխնիկական հաղորդակցության փաստացի օրինակ կարող են համարվել Լեոնարդո դա Վինչիի նկարագրություններն իր հայտնագործությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, տեխնիկական հաղորդակցությունը լուրջ ուշադրության արժանացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ կիրառվող ռազմավարությունը և տեխնոլոգիաները ավելի բարդացան, ի հայտ եկավ ստանդարտացված ընթացակարգերի, սահմանումների, նկարագրությունների և հրահանգների անհրաժեշտություն: Այդ ժամանակ էր, որ ծագեց ***տեխնիկական գիր*** հասկացությունը, որը տեխնիկական հաղորդակցության ցանկացած գրավոր ձևն է՝ ընդունված մի շարք մասնագիտական ոլորտներում: Իսկ պատերազմից հետո տեխնիկական գիրը դարձավ մասնագիտություն, որն այսօր դասավանդվում է համալսարաններում և շատ լուրջ պահանջարկ ունի: Հայաստանում կա

տեխնիկական տեքստ կազմողների խիստ անհրաժեշտություն, որը պայմանավորված է մեր շուկայի զարգացմամբ, նոր տեխնոլոգիաների ու սարքերի արտադրությամբ, որոնց համար պարտադիր կերպով գրվում են շահագործման ձեռնարկներ և մի շարք նորմատիվ փաստաթղթեր:

Հայաստանը միշտ էլ աչքի է ընկել իր գիտական ներուժով: Խորհրդային միության տարիներին, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հիմնվել են մի շարք գիտական ինստիտուտներ, օր.՝ Երևանի Մերգեյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, Ա. Ի. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտը, և այլն: Մեծապես խորացվեց նաև բնական գիտությունների դասավանդումը թե՛ դպրոցում, թե՛ բուհում, երկրում սկսեցին գործել բազմաթիվ արդյունաբերական կենտրոններ տեղական սպառողների և Խորհրդային միության շուկաների համար: Այսօր, ունենալով գիտական մեծ ներուժ, Հայաստանը միջազգային բուռն համագործակցություն է իրականացնում թե՛ փորձի փոխանակման, թե՛ ներդաշնակեցման և թե՛ անդամակցության շրջանակներում: Նման միջմշակութային և մասնագիտական լայն հաղորդակցության մեջ հույժ կարևորվում է որակյալ և պատշաճ մակարդակով իրականացվող թարգմանության անհրաժեշտությունը, ինչն էլ կբարելավի Հայաստանի ազգային տնտեսությունը՝ ճանապարհներ հարթելով դեպի միջազգային շուկա:

Ազգային տնտեսության որակի ենթակառուցվածքի հենքային սյունը Չափումների միասնականության ապահովման համակարգն է, որը ոչ միայն ապահովում է ՀՀ քաղաքացիների անվտանգությունը առողջապահության և աշխատանքային պայմանների տեսանկյունից, այլև կարգավորում է սպառող - վաճառող առևտրային հարաբերությունները: Միևնույն ժամանակ Չափումների միասնականության ապահովման համակարգի պատշաճ գործունեության արդյունքում հնարավոր է զարգացնել ՀՀ առաջարկած արտադրանքի և մատուցած ծառայությունների որակական բնութագրերը՝ միջազգային մակարդակին համապատասխան, ինչն էլ կնպաստի առևտրային ոլորտում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, այսինքն՝ արտադրողը և ծառայություն մատուցողը մրցունակ կլինեն միջազգային շուկայում:

Չափումների միասնականության ապահովման համակարգը հիմնված է չափագիտության վրա, որը գիտություն է չափումների և դրանց կիրառման մասին: Չափագիտությունը, որպես գիտություն, ունի միջգիտակարգային բնույթ. այն առկա է բոլոր այն գիտություններում և գիտակարգերում, որտեղ իրականացվում են փորձեր և չափումներ (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, բժշկություն, դեղագիտություն և այլն), հետևաբար՝ դրանց տարրերն էլ առկա են չափագիտության մեջ: Իրականում անհնար է պատկերացնել որևէ ճշգրիտ կամ բնական գիտություն առանց ճշգրիտ չափումների: Ահա թե ինչու չափագիտության բնագավառի տեքստերը բավականին բարդ են անգամ բարձրագույն տեխնիկական կրթություն ունեցող ընթերցողների համար: Քանի որ չափագիտությունն անընդհատ

գարգացող գիտությունն է, հարկավոր է հետևել այդ զարգացումներին թե՛ միջազգային, թե՛ ազգային մակարդակում, ինչի համար կարևոր դեր են խաղում այդ բնագավառին վերաբերող տեքստային նյութերի (տեղեկատվության կրիչների) ճիշտ մեկնաբանությունը, մշակումը և ներկայացումը տարբեր լեզուներով:

Տեխնիկական գրի մեջ, բացի բովանդակությունից, է՛լ ավելի կարևոր է լեզուն: Վերջիվերջո, չկա կենսագործունեության այնպիսի մի բնագավառ, որ գոյատևի առանց լեզվի: Լեզուն է այն հիմնական ուժը, որն ամեն ինչ դնում է շարժման մեջ, և դրա պատշաճ կիրառման դեպքում է միայն հնարավոր ցանկացած նպատակի իրագործում: Բսկ գրավոր խոսքն ավելի կարևոր է՝ հատկապես տեխնիկական տեղեկատվության փոխանցման համար: Քանի որ գրավոր խոսքը, կամ այլ կերպ ասած՝ տեքստը, սահմանափակ է, և չկա հավելյալ բացատրությունների հնարավորություն տվյալ տեքստի սահմաններից դուրս, տեղեկատվությունը պետք է մատուցվի հստակ, հասկանալի և լիարժեք: Բսկ տեխնիկական տեքստերի թարգմանությունը կրկնակի բարդ գործընթաց է, քանի որ թիրախ լեզվում այն վերաբարտադրելուց առաջ պետք է հասկանալ՝ ինչ է գրված և ինչ նպատակով: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է հասկանալ անգամ մայրենի լեզվով գրված նեղ մասնագիտական տեխնիկական տեքստը, և առավել բարդ է ընկալել օտար լեզվով գրված տեքստը, որը լի է օտար տերմիններով, տվյալ լեզուն կրող հասարակության և մշակույթի զարգացման մակարդակից բխող տարօրինակ իրություններով, որոնք կարող են ընդհանրապես անծանոթ լինել տեխնիկական թարգմանչին: Բսկ տեղեկատվությունը մեկնաբանելուց հետո այդ ամենը պետք է այնպես փոխանցել մեկ այլ լեզվով, որ ընթերցողն էլ իր հերթին կարողանա այն ճիշտ ընկալել ու մեկնաբանել:

Հետազոտության բուն *նպատակն է՝* բացահայտել տեխնիկական տեքստերի իմաստային, կառուցվածքային և լեզվառճական առանձնահատկությունները, պարզել դրանց առանձին տարրերի փոխադարձ կապը լայն համատեքստի հետ, ինչպես նաև բնագիր տեքստերի և թարգմանական տարբերակների մանրամասն զուգադրական վերլուծության միջոցով լուսաբանել տեխնիկական տեքստերի համարժեք թարգմանության չափանիշները և սահմանել արդի թարգմանություններին ներկայացվող որոշակի պահանջներ: Այդ ամենն իրականացնելու համար սույն ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ *խնդիրները*.

1. Դիտարկել տեխնիկական տեքստերի տիպաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ձևավորման վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնները:

2. Ուսումնասիրել չափագիտության բնագավառի տեխնիկական տեքստերի բնույթը՝ տեքստաբանության, տեքստի լեզվաբանության, ինչպես նաև տեքստի վերլուծության լույսի ներքո:

3. Քննել չափագիտության բնագավառի տեխնիկական տեքստերի տարատեսակները և որոշակի դասակարգում կատարել՝ ելնելով դրանց

կառուցվածքային և իմաստային, ինչպես նաև լեզվաոճական առանձնահատկություններից:

4. Ուսումնասիրելով տեխնիկական թարգմանության քննության տեսական նախադրյալները՝ գնահատել տեխնիկական թարգմանության արդի վիճակը և դրան ներկայացվող միջազգային և ազգային պահանջները:

5. Դիտարկել տեխնիկական տեքստ թարգմանելու բազմափուլային աշխատանքը՝ կառուցվածքային, քերականական և բառային մակարդակներում իրականացվող համակողմանի վերլուծության հիման վրա:

6. Ուսումնասիրել չափումների միասնականության համակարգում կիրառվող տեքստերի քերականական առանձնահատկությունները և դրանց համարժեք փոխանցումը հայերեն:

7. Քննության առնել ուսումնասիրվող տեքստերի բառապաշարային շերտերը՝ հատկապես անդրադառնալով տերմինաբանական խնդիրներին, լայն առումով վերլուծել բառապաշարային միավորների թարգմանությունը հայերեն:

8. Դիտարկել տեխնիկական տեքստերում մեծ դեր ունեցող արտալեզվական տարրերի (աղյուսակներ, պատկերներ, պայմանանշաններ) փոխանցման խնդիրները թարգմանական գործընթացում:

9. Ամփոփել թարգմանական գործընթացում տեխնիկական թարգմանչի իրականացրած քայլերը և կիրառվող մոտեցումները, որոնց համաձայն թարգմանության արդյունքում ստացվում է լիարժեք և ամփոփ տեքստ՝ թարգմանության նախասահմանված նպատակին համապատասխան:

Հետազոտության **նորույթը** պայմանավորված է, նախ և առաջ, այն հանգամանքով, որ աշխատանքում փորձ է արվում նորովի նայել տեխնիկական տեքստերի իմաստային և լեզվաոճական առանձնահատկություններին և դրանց թարգմանելիության խնդրին, մանրամասն հիմնավորել դրանց համարժեք փոխանցման անհրաժեշտությունը և հնարավոր ուղիները: Ըստ էության, նորույթ կարելի է համարել նաև չափագիտության բնագավառի տեքստերի որոշակի դասակարգման փորձը՝ ելնելով դրանց տեքստային առանձնահատկություններից և գործառույթային նշանակությունից, ինչպես նաև որոշակի թարգմանական մեթոդների ու թարգմանված տեքստերին ներկայացվող չափորոշիչների մշակումը:

**Մեթոդաբանական առումով** ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել համատեքստային, կառուցվածքային, իմաստաբանական, լեզվաոճական, և գույգադրական վերլուծության մեթոդները:

Սույն աշխատանքն արժեքավոր է տեխնիկական թարգմանության բնագավառում՝ **տեսական** հիմք հանդիսանալով չափագիտական տեքստերի կառուցվածքային և լեզվական առանձնահատկությունների հետազոտման և դրանց թարգմանության մեթոդների և սկզբունքների ուսումնասիրման համար: Աշխատանքի արդյունքները և եզրահանգումները կարող են կիրառվել թարգմանության տեսության դասընթացներում, մասնավորապես՝ տեխնիկական թարգմանության առնչվող որոշակի հարցերի ուսումնասիրության շրջանակներում:

**Գործնական առումով** ստենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները օգտակար կլինեն տեխնիկական տեքստերի թարգմանության բազմափուլային աշխատանքի վերաբերյալ գործնական հետազոտությունների իրականացման համար, ինչը կնպաստի թարգմանության միջոցով տեխնիկական տեքստերի ստույգ վերարտադրությանը և, անհրաժեշտության դեպքում, տերմինների բազայի համալրմանը: Ատենախոսությունը կարող է նաև հենքային նյութ հանդիսանալ չափագիտության բնագավառում տեխնիկական թարգմանությունների իրականացման պատշաճ որակի ապահովման համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ յուրաքանչյուրը համապատասխան ենթագլուխներով և ծանոթագրություններով, եզրակացությունից, ուսումնասիրված գրականության ցանկից և չորս հավելվածից:

**Ներածության** մեջ ամփոփ ներկայացված են հետազոտության ուղղվածությունը, արդիականությունը, նորույթը, նպատակը, առաջադրված խնդիրները, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև աշխատանքի ընդհանուր կառուցվածքը:

**Առաջին գլուխը** նվիրված է տեխնիկական տեքստերի ուսումնասիրությանը՝ տեքստաբանության, տեքստի լեզվաբանության և տեքստի տիպաբանության տեսանկյունից: Տեխնիկական թարգմանությունը հնարավոր չէ դիտարկել առանց ուսումնասիրելու տեխնիկական տեքստերի թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական առանձնահատկությունները: Սույն գլխում դիտարկվում են տեքստը վերլուծելու, մեկնաբանելու և գրելու տեսական մոտեցումները: Դիտարկելով տեքստերի տարատեսակները և թարգմանության տեսանկյունից իրականացվող անհրաժեշտ վերլուծությունը՝ թարգմանիչը ձևավորում է տեխնիկական տեքստերի շարադրման ընդհանուր կաղապար:

Տեխնիկական տեքստը՝ տեխնիկական հաղորդակցության գրավոր տեսակ է, որը կիրառվում է մի շարք տեխնիկական և մասնագիտական ոլորտներում, օր.՝ համակարգչի ապարատային և ծրագրային ապահովման, ճարտարագիտության, քիմիայի, ավիացիայի, մեքենաշինության, կենսատեխնոլոգիաների և այլ բնագավառներում: Տեխնիկական տեքստերը, ընդգրկվելով Ռայսի տեքստի տիպաբանության տեղեկատվական տեսակի մեջ, ունեն իրենց տարատեսակները, որոնք կարող են լինել լիարժեք տեղեկատվական կամ խառնածին բնույթի: Այդ տարատեսակները խմբավորելու համար տեխնիկական տեքստերը դիտարկվում և դասակարգվում են Ռայսի և Բուդինսկու առաջարկած մոտեցումների համաձայն: Ըստ Ռայսի կատարած դասակարգման՝ տեքստի տեսակներից յուրաքանչյուրն իրականացնում է իրեն հատուկ գործառույթ և օժտված է բնութագրիչ առանձնահատկություններով: Այնուհետև սահմանվում է թարգմանված տեքստի գործառույթը և առաջարկվում արդեն իսկ նշվածից բխող պահանջները բավարարող թարգմանության մեթոդը և ուղղությունը, որն էլ շատ կարևոր է յուրաքանչյուր բնագավառում աշխատող թարգմանչի համար:

Բուդինսկին, համաձայն տեքստի գործառույթի, իրականացրել է տեխնիկական գրի ավելի մանրակրկիտ խմբավորում՝ դրանք բաժանելով հետևյալ խմբերի (Budinski, 2001 p. 20).

1. *ուսուցման և կրթության համար* նախատեսված տեխնիկական բնույթի տեքստերը խառնածին տեքստեր են, որոնք կարող են ունենալ արտահայտչական և օպերատիվ տեսակներին բնորոշ հատկություններ,

2. *արտոնագիրը* խիստ տեխնիկական փաստաթուղթ է, որի ձևն ու կառուցվածքը նախասահմանված է տվյալ երկրի իրավական դաշտով: ՀՀ-ում, որպես արտոնագրման ենթակա օբյեկտներ, սովորաբար դիտարկվում են գյուտերը և օգտակար մոդելները, որոնց նկատմամբ իրավունքները հաստատվում են արտոնագրով: Արտոնագրային մասնագիրն ունի նեղ մասնագիտական ուղղվածություն, նախատեսված է սահմանափակ թվով որոշակի ընթերցողների համար,


3. *գեկույցներ, նամակներ, հուշատողթեր* և այլն՝ աշխատանքային վայրում իրականացվող հաղորդակցության գրավոր տեսակ են, որոնք ոճական տեսանկյունից բավականին լայն ընդգրկույթ ունեն՝ ոչ պաշտոնականից մինչև խիստ պաշտոնական, սակայն դրանք պետք է առաջին հերթին փոխանցեն ստույգ տեղեկատվություն և դրանք հիմնականում կազմվում են ըստ նախասահմանված ձևի և կառուցվածքի,

4. *ցուցումներ, շահագործման ձեռնարկներ, ընթացակարգեր* և այլն՝ տեղեկատվական տեքստեր են, որոնք չունեն արտահայտչական կամ օպերատիվ տեսակին հատուկ որակներ: Այս տեքստերը նախատեսված են ընթերցողների լայն շրջանակի համար՝ գիտնականից մինչև սովորական սպառող՝ կախված տեխնիկական տեքստի տարատեսակից: Դրանք գրվում են տեխնիկական կանոնակարգերի կամ չափանիշներով սահմանված պահանջների համաձայն՝ կախված երկրի օրենսդրական դաշտից:

Տեխնիկական տեքստերի տարատեսակների լուսաբանմանը զուգընթաց լուրջ ուշադրության են արժանանում նաև դրանց կազմավորման վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնները՝ Նորդի առաջարկած տեքստային և արտատեքստային գործոնների հիման վրա, որոնք հետևյալն են՝ տեքստի թեմա, բովանդակություն, ենթադրություն, տեքստի կառուցվածք, արտալեզվական տարրեր, բառապաշար, նախադասության կառուցվածք, վերհատույթային առանձնահատկություններ (Nord 1991, p. 108), հասցեագրող, միտում, հասցեատեր, միջավայր, վայր, ժամանակ, դրդապատճառ և տեքստի գործառույթ (Nord 1991, pp. 16-72):

Ստորև բերվող գծապատկերում ուրվագծվում են լեզվական և տեքստային այն միջոցները, որոնց շնորհիվ ստացվում է ամբողջական, ամփոփ տեխնիկական տեքստ:





Նկ. 1. Տեխնիկական տեքստերի կազմավորման վրա ազդող գործոնները

**Երկրորդ գլխում** անդրադարձ է կատարվում տեխնիկական թարգմանության պատմական և տեսական հիմնահարցերին: Քանի որ թարգմանության գործընթացը բաղկացած է մի քանի փուլից, և այդ փուլերում կիրառվում են տարբեր ռազմավարություններ, անհրաժեշտ է գտնել համապատասխան տեսական հիմքեր այդ բազմափուլ գործընթացը մեկ ընդհանուր նպատակի ուղղելու համար: Երկրորդ գլխում դիտարկվում են համարժեքության և գործաբանական հայեցակերպերով առաջարկվող տեսական հիմքերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական թարգմանչի նպատակն է ստեղծել թիրախ լեզվով և թիրախ մշակույթում առկա համապատասխան տեքստերին զուգահեռ տեքստ՝ դիտարկվում է այնպիսի մոտեցում, ըստ որի, որպես թարգմանության միավոր, ընդունվում է տեքստը, այլ ոչ թե նախադասությունը կամ բառը: Որպես տեսական հիմք՝ ներկայացվում է Սկոպոս տեսությունը, որն ավելի լայն և ընդգրկուն է պատկերում թարգմանական գործընթացը և հնարավորինս արտացոլում տեխնիկական թարգմանության գործնական հատվածը: «Սկոպոս» բառը հունարեն նշանակում է «նպատակ», և Սկոպոս տեսության կենտրոնում ԹՏ-ի նպատակն է (Nord, 1997, p. 27):

Թարգմանության նպատակը պայմանավորվում է ԹՏ-ի ընթերցողով և, քանի որ թարգմանությունը համարվում է նպատակային գործառույթ, ուրեմն գոյություն ունի նախատեսված ընթերցող: Սկսած տեսությունը թարգմանությունը դիտարկում է ոչ թե որպես վերակողման գործընթաց, այլ որպես հաղորդակցական ակտ, ինչն էլ համապատասխանում է տեխնիկական տեքստերի թարգմանության իրողությանը: Համաձայն այս տեսության, բոլոր տեքստերն ունեն որոշակի նպատակ, ահա թե ինչու դրանք պետք է թարգմանվեն այնպես, որ գործեն նախատեսված իրավիճակի և մարդկանց շրջանակի համար (Nord, 1997, p. 29):

Երկրորդ գլխում ուսումնասիրվում են նաև տեխնիկական թարգմանության ներկայիս վիճակը և տեխնիկական թարգմանչին անհրաժեշտ հմտությունները՝ գրագետ թարգմանություն իրականացնելու համար, ինչպես նաև թարգմանության գործընթացին ներկայացվող ազգային և միջազգային պահանջները: Բանն այն է, որ նման միջմշակութային և նեղ մասնագիտական հաղորդակցման մեջ մեծ ջանքեր են պահանջվում միջազգային և ազգային նորմերին համապատասխանող որակյալ թարգմանություն ապահովելու համար, քանի որ թարգմանությունը կամուրջ է միջմշակութային և մասնագիտական հաղորդակցման մեջ: Բացի այդ՝ թարգմանչական գործընթացը ճիշտ և համակարգված իրականացնելու արդյունքում կարելի է.

- բարելավել տերմինաբանական տվյալների բազան՝ թույլ տալով դրա հետագա կիրառումը,
- ապահովել տեխնիկական թարգմանության միասնականությունը՝ օրինաչափ կիրառվող տերմինների առկայության միջոցով (ազգային և միջազգային մակարդակներում),
- բարձրացնել թարգմանության և մատուցված ծառայության որակը,
- իրականացնել թե՛ միջազգային, թե՛ ազգային մակարդակներում ընդունելի և ճանաչելի թարգմանություններ:

***Երրորդ գլուխը*** նվիրված է չափագիտության բնագավառում առկա գրականության դասակարգմանը: Կոնկրետ օրինակների հիման վրա բացահայտվում են տեքստում առկա լեզվական տարբեր մակարդակների միավորների (կառուցվածքային, բառապաշարային, քերականական) համարժեք փոխանցման հիմնական ուղիները՝ թիրախ լեզվով վերջնական լիարժեք տեքստ ստանալու նպատակով:

Տեխնիկական տեքստերի թարգմանության բուն գործընթացը սկսվում է բնօրինակ տեքստի բնագավառի ուսումնասիրությունից, այնուհետև դիտարկվում է տվյալ բնագավառում տեքստերի կապակցվածությունը, որին հաջորդում է կառուցվածքային, քերականական և բառապաշարային առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այսինքն՝ գործընթացը ընդհանուրից շարժվում է դեպի մասնավորը: Ավելի լավ կարելի է ներկայացնել դա «փազ» կոչվող խաղի տեսքով, երբ արդեն մանր տարրերից հավաքված նկարը ուսումնասիրվում, հետո քանդվում

և ամեն տարրը դիտվում և վերլուծվում է յուրովի, որ նորից հավաքելիս՝ դրա մասերը տեղադրվեն իրենց ճիշտ տեղում: Թարգմանության գործընթացի նախավերջին փուլը ենթադրում է մասնատված տեքստի վերլուծված և համարժեքորեն թարգմանված տարրերի (բառ, նախադասություն, պարբերություն) ճիշտ կազմակերպում և դասավորում նոր կառուցվող տեքստում, որպեսզի ստացվի բնագիր տեքստի լիարժեք պատկերը: Տեքստ գրելը թարգմանության գործընթացի նախավերջին փուլն է, քանի որ թարգմանության գործընթացի վերջին փուլը տեքստի խմբագրումն է մասնագետի կողմից: Սույն մասում ներկայացվում են տեխնիկական տեքստերի կառուցվածքային, քերականական և բառային մակարդակում իրականացվող աշխատանքի հիմնական սկզբունքները, որոնք միասնական կիրառման դեպքում կազմավորում են մեկ ընդհանուր տեխնիկական տեքստ՝ իրեն հատուկ լեզվառձական առանձնահատկություններով:

Երրորդ գլխում իրականացվում է նաև թարգմանված տեխնիկական տեքստի համալիր վերլուծություն և սահմանվում են այն նվազագույն սկզբունքները, որոնք անհրաժեշտ են թարգմանչին՝ տեքստի հետ համակարգված աշխատելու համար: Քննությունը ցույց է տալիս, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը կարևոր քայլ է նեղ մասնագիտական և տեխնիկական տեքստերի թարգմանության բնագավառում միջազգային մակարդակին համապատասխան ծառայություններ և արդյունք մատուցելու համար:

Տեխնիկական տեքստը չի կարող դիտարկվել եզակի օրինակի վրա, քանի որ մեկ համակարգ բովանդակող տարրերը պետք է լինեն միասնական բնույթի, այսինքն՝ տեքստերն անկախ իրենց կապակցվածությունից (մեկը մյուսից բխող կամ կարգավիճակով հավասար) պետք է լինեն մեկը մյուսին հետևելի, որպեսզի չխախտվի տրամաբանական շղթան, որը պայմանավորվում է տերմինաբանական, ռձական, քերականական և կառուցվածքային համապատասխանությամբ: Տեխնիկական տեքստերը կամ փաստաթղթերը թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային տեսանկյունից պետք է լինեն համահունչ և հատկապես չպետք է լինեն իրարամերժ: Որպես կանոն, նմանատիպ փաստաթղթերում խուսափում են հավելյալ կրկնողություններից, փոխարենը՝ օգտագործվում են հղումներ այս կամ այն փաստաթղթին: Թարգմանությանը մոտենալով տեքստի լեզվաբանության տեսանկյունից, այսինքն՝ որպես թարգմանության միավոր ընդունելով տեքստը, հնարավոր է ստեղծել թարգմանության լեզվում իրավիճակին հարիր տեքստ:

Ուսումնասիրելով և գնահատելով թարգմանության արդի վիճակը, նաև չափագիտության բնագավառի տեխնիկական տեքստերի բնույթը՝ տեքստաբանության, տեքստի լեզվաբանության, ինչպես նաև տեքստի վերլուծության լույսի ներքո՝ գալիս ենք հետևյալ **եզրահանգումներին**.

1. Տեխնիկական փաստաթղթերի ստորադասական (հիերարխիկ) դասավորվածության իմացությունն առաջնային տեղ է զբաղեցնում թարգմանչի համար, քանի որ դա ներտեքստայնության, համեմատության և հետևապես մեկնաբանության առաջին աղբյուրն է: Ընդ որում, թարգմանիչը պետք է իմանա

տեխնիկական տեքստերի կամ փաստաթղթերի ստորադասությունը երկու մշակույթում՝ երկու աշխատանքային լեզուներով:

2. Չափագիտության բնագավառում առկա տեխնիկական տեքստերը կարող են բաժանվել երկու ենթախմբի՝ կանոնակարգող և նորմատիվ (ընդհանուր տեխնիկական) փաստաթղթեր: Կանոնակարգող փաստաթղթերը ներառում են պարտադիր իրավական նորմեր և ընդունվում են կառավարող մարմինների կողմից: Հետևապես, դրանք մեկնաբանելիս և թարգմանելիս հարկավոր է օգտվել իրավական ակտերի մեկնաբանման և թարգմանության կանոններից: Նորմատիվ (ընդհանուր տեխնիկական) փաստաթղթերի շարքին պետք է դասվեն ստանդարտները, Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՕՉՄԿ) փաստաթղթերը, ՕՉՄԿ հանձնարարականները, չափագիտական կանոնները և նորմերը, չափման մեթոդիկաները, ուղեցույցները և սարքերը բնութագրող փաստաթղթերի փաթեթները:

3. Տեխնիկական տեքստի թարգմանությունը բազմափուլային աշխատանք է՝ հիմնված կառուցվածքային, քերականական և բառային մակարդակում իրականացվող վերլուծության և համարժեք փոխանցման մեթոդների վրա:

4. Տեխնիկական տեքստ ստանալու կամ մշակելու համար անհրաժեշտ և ազդող տարրերն են. **արտատեքստային** վայր, ընթերցող, նպատակ և ժամանակ, **տեքստային**՝ ներկայացման միջոց (*վերհատույթային առանձնահատկություններ, արտալեզվական տարրեր*), բովանդակություն (*տեքստի կառուցվածք, թեմա, տեղեկատվության աղբյուր*), լեզու (*քերականություն, նախադասության կառուցվածք, բառապաշար*):

5. Տեխնիկական տեքստերի տրամաբանական, փոխկապակցված, հստակ շարադրված միտքը ենթադրում է հստակ քերականական կառույցների, ինչպես նաև նախադասությունների կայուն կառուցվածքների կիրառություն, մասնավորապես՝ բարդ նախադասություններ պարունակող ցանկերում, ցուցակներում համարակալում անելիս գուգահեռականության պահպանում, բարդ նախադասություններում հիմնական կամ կարևոր տեղեկատվության ապահովում նախադասության առաջին մասում, կրավորական սեռի գերակշիռ գործածություն, դերբայական դարձվածների, հետադաս ընդլայնված որոշիչների և հատկացուցիչների կիրառություն, հրամայական նախադասությունների գործածություն՝ հատկապես հրահանգներ բովանդակող տեքստերում, նախադասության մեջ անիմաստ կրկնորությունների բացառում, նախադասության ճիշտ կետադրում:

6. Տեխնիկական տեքստերը բաղկացած են լեզվական բառապաշարից և արտալեզվական միավորներից, որոնց հետ աշխատելու համար միայն տերմինների իմացությունը բավարար չէ: Տեխնիկական թարգմանչից չի պահանջվում լինել տերմինաբան, սակայն անհրաժեշտ է առնվազն ծանոթ լինել տերմինակազմության հիմնական կանոններին, որոնք են՝ 1) նոր տերմինի ստեղծում, 2) առկա տերմինի կիրառում, 3) միջլեզվային փոխառություն: Տերմինների ճիշտ և համարժեք

թարգմանություն իրականացնելու համար հարկավոր է լավ ուսումնասիրել երկու լեզվում տվյալ տերմինի ողջ տերմինահամակարգը և համակարգում առկա ներտերմինային կապերը:

7. Տերմինների թարգմանության բազմապիսի մեթոդներից հատկապես կիրառելի են հետևյալները.

- համարժեքով փոխարինում,
- տերմինային իմաստայնացում,
- փոխառություն:

Թարգմանչի կողմից իրականացվող տերմինաբանական աշխատանքը ոչ միայն տերմինների մեխանիկական թարգմանությունն է, այլ նաև տերմինաբանական տվյալների բազայի համալրումն ու թարմացումը, որը կաշակցի թարգմանիչների հետագա աշխատանքին, ինչպես նաև կնպաստի տերմինների համակարգի միասնականությանը և հետևելիությանը:

8. Տեխնիկական թարգմանության գործընթացում հարկ է հատկապես կարևորել հետևյալ քայլերը. բնագավառի ուսումնասիրություն սկզբնաղբյուր և թիրախ մշակույթներում, բնագավառի գրականության ուսումնասիրություն սկզբնաղբյուր և թիրախ լեզուներում, նպատակային ընթերցողների ակնկալիքների ուսումնասիրություն, ներտեքստային կապերի բացահայտում, տեքստի կառուցվածքային վերլուծություն, տեքստի լեզվառձական վերլուծություն, վերլուծված միավորների փոխանցում թիրախ լեզվին բնորոշ առանձնահատկությունների համաձայն, փոխանցված միավորների վերաձևակերպում թիրախ լեզվում տեքստայնության յոթ չափորոշիչների համաձայն, ստացված տեքստի վերջնական խմբագրում: Այս քայլերն իրականացնելու համար, միայն լեզվաբանական կրթությունը բավարար չէ, այստեղ անհրաժեշտ է թարգմանական տեսությունների և ռազմավարությունների ճիշտ կիրառում, ինչպես նաև հենքային գիտելիքներ՝ ուսումնասիրություններ իրականացնելու և բնագավառի բոլոր առանձնահատկություններին ծանոթանալու համար:

9. Բնագիր տեխնիկական տեքստում կարևոր են աղյուսակների, պատկերների, գիտատեխնիկական պայմանանշանների դերն ու գործառույթը: Ուստի դրանք թիրախ լեզու փոխանցելիս պետք է օգտվել տվյալ լեզվում արտալեզվական միավորների ներկայացման սահմանված կարգից, ինչը կնպաստի թարգմանված տեքստի «անկախությանը» թիրախ մշակույթում:

Վերլուծելով չափագիտության բնագավառի տեխնիկական տեքստերի բնութագրիչ առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկելով այն մոտեցումները, որոնց կիրառումն ապահովում է թարգմանության արդյունքում լիարժեք և ամփոփ տեքստի կազմավորում՝ կարող ենք ասել, որ տեքստում ընդգրկված յուրաքանչյուր տարր՝ թե՛ քերականական, թե՛ բառային, թե՛ իմաստային, հարկավոր է կապել տեքստին, համատեքստին և տեքստից դուրս

մատնանշվող երևույթին: Այդ դեպքում է միայն հնարավոր ստանալ ամփոփ նպատակային տեքստ:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. *Տեխնիկական թարգմանության առանձնահատկությունները // Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջնաշկուխային փոխներթափանցման միջոց, Երևան, ԵՊՀ, 2014, էջ 300-306:*
2. *Բառապաշարը և բառային ու քերականական փոխակերպումները տեխնիկական թարգմանության մեջ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում №1 (16), Երևան, ԵՊՀ, 2014, էջ 24-34:*
3. *Տեխնիկական թարգմանության գործընթացին ներկայացվող միջազգային և ազգային պահանջները // Աստղիկ №26 (Գիրք թարգմանչաց), Երևան, Լուսակն հրատ, 2015, էջ 133-146:*
4. *Տեխնիկական տեքստերի լեզվաբանական առանձնահատկությունները // Աստղիկ №26 (Գիրք թարգմանչաց), Երևան, Լուսակն հրատ, 2015, էջ 342-360:*
5. *Մասնագիտական բնագավառում տեխնիկական տեքստերի հետ աշխատելու սկզբունքները թարգմանության տեսանկյունից // Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտական տեղեկագիր N 1-2 (26-27), Երևան, 2016, էջ 155-160 (համահեղինակ՝ Է. Հ. Քամալյան):*
6. *Աղյուսակները, պատկերները և գիտատեխնիկական պայմանանշանները տեխնիկական տեքստերում // Материалы международной научной конференции, посвященной 85-летию национального аграрного университета Армении, Ереван, НАУА, 2016, стр. 221-226 (համահեղինակ՝ Է. Հ. Քամալյան):*

**АННА ВАГАНОВНА СААКЯН**  
**Структурные и лингвостилистические особенности**  
**технических текстов и их воспроизведение на армянском языке**  
**(на основе текстов системы обеспечения единства измерений)**

Диссертация на соискание ученой степени  
кандидата филологических наук  
по специальности 10.02.07 - "Романо-германские языки"

**РЕЗЮМЕ**

Реферируемая диссертация посвящена всестороннему рассмотрению проблемы перевода технических текстов. В исследовании предпринимается попытка выявления структурных и лингвостилистических особенностей, в частности, текстов системы обеспечения единства измерений, а также выработки ряда принципов работы при переводе технических текстов в данной области.

**Актуальность исследования** обусловлена тем фактом, что технический перевод все еще является одним из наиболее сложных сфер переводоведения, требующая новых решений и подходов в современном мире.

**Целью исследования** является выявление семантических, структурных и лингвостилистических особенностей технических текстов, определение соотношений отдельных элементов в более широком контексте, а также установление критерий эквивалентного перевода технических текстов и определение конкретных требований к современному переводу с помощью сравнительно-сопоставительного анализа исходных текстов и их переводов.

**Материалом для исследования** послужили тексты системы обеспечения единства измерений и их переводы.

**Задачи исследования:**

1. Изучить типологические и структурные особенности технических текстов, а также лингвистические и экстралингвистические факторы, влияющие на формирование технического текста.
2. Исследовать метрологические тексты сквозь призму текстологии методом лингвостилистического анализа текстов.
3. Изучить различные типы технических текстов и предпринять попытку классификации метрологических текстов, исходя из их структурных, семантических и лингвостилистических особенностей.
4. Рассмотреть многоступенчатый процесс перевода технического текста на основе комплексного анализа структурных, грамматических и лексических особенностей.

5. Оценить значимость экстралингвистических элементов (таблицы, рисунки, символы) в технических текстах и предложить соответствующие методы их воспроизведения при переводе.

**Новизна исследования**, в первую очередь, обусловлена тем, что в работе структурные и лингвостилистические особенности технических текстов и проблема их воспроизведения на армянском языке представлены с новой точки зрения применением определенных принципов и критериев оценки перевода метрологических текстов.

**Практическое значение исследования** состоит в том, что оно может быть полезным для дальнейших практических работ в сфере перевода технических текстов и внесет определенный вклад в задачу достижения единства подходов и обеспечения высококачественных переводов в соответствии с международными стандартами. Кроме того, настоящее исследование может быть применено в качестве **теоретической основы** для изучения технического перевода, а также при подготовке технических переводчиков в данной области.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и четырех приложений.

**Первая глава** посвящена изучению технических текстов, их классификации и теоретических моделей формирования, а также теоретических подходов к анализу и интерпретации технических текстов.

Во **второй главе** рассматриваются исторические и теоретические вопросы технического перевода, а также особенности самого переводческого процесса. В этой части также проводится исследование теории *скопоса* или так называемой *скопос-теории*, рассматривающую перевод как целенаправленную деятельность, в которой выбранные стратегии и методы перевода должны в первую очередь определяться целью (скопосом) или функцией, которую призван выполнять переведенный текст.

В **третьей главе** исследуются структурные, лексические и грамматические особенности метрологических текстов с последующей разработкой определенных принципов и стратегий их адекватного воспроизведения при переводе.

Результаты проведенной работы обобщены в **заключении** исследования.



ANNA VAHAN SAHAKYAN  
**Structural and Linguostylistic Peculiarities of Technical Texts and Their  
Rendering into Armenian**  
(with special reference to the texts of  
the System of Ensuring Uniformity of Measurement)

**Summary**

The research aims at studying the structural and linguostylistic peculiarities of technical texts, particularly focusing on the texts of the System of Ensuring Uniformity of Measurement, as well as discussing the problems of technical translation and establishing a range of principles for dealing with technical texts in the given field and their equivalent rendering in the target language.

The **topicality** of the investigation is conditioned by the fact that technical translation still remains one of the most intricate areas of translation studies requiring new solutions and approaches in the modern world.

The **objectives** of the thesis are:

- to identify the semantic, structural and linguostylistic peculiarities of technical texts,
- to determine the interrelation of different text elements with the wider context, as well as define specific requirements for an up-to-date translation of the selected type of texts by means of comparative-contrastive analyses of the source and target texts.

To achieve these goals the following **tasks** have been put forward:

1. to examine the semantic and structural peculiarities of technical texts, as well as the linguistic and extralinguistic factors affecting their formation;
2. to carry out the research of the selected metrological texts through the prism of textology, text linguistics and text analysis;
3. to propose a certain classification of metrological texts based on their structural, semantic and linguostylistic peculiarities.
4. to assess the current standards of technical translation and define the prescribed international and national requirements by analysing some theoretical aspects of technical translation.
5. to examine the multi-stage translation process of technical texts on the basis of a complex analysis of the structural, grammatical and lexical levels of the source and target texts.
6. to reveal the value and significance of the extralinguistic elements (tables, charts, pictures, symbols) of metrological texts and discuss the issue of their proper rendering in the target text.

The **novelty** of the research consists in the raised problem itself, as it is the first time that the structural and linguostylistic peculiarities of metrological texts and

their equivalent conveyance in translation have become an object of investigation. Moreover, some new approaches and methods have been worked out in the research to ensure equivalent rendering of metrological texts in the target language.

From the **theoretical** viewpoint, the research makes a contribution to the study of the linguistic and structural peculiarities of technical texts and the problem of their equivalent translation.

The **practical significance** of the work is that it can serve as a useful guideline for technical translators to ensure uniformity and high quality in translation on both national and international levels, as well as become a practical basis for translator training in special courses.

The thesis consists of introduction, three chapters, conclusion, bibliography and four appendices.

**Chapter I** is devoted to the general study of technical texts and their varieties in light of textology, text linguistics and text typology. This chapter also touches upon the issues of text formation and general theoretical models for technical texts, as well as the linguistic and extralinguistic factors affecting the formation of a complete technical text.

**Chapter II** deals with relevant historical and theoretical issues of technical translation, the discussion of the stages of translation process with special reference to the 'Skopos' theory as an insight into the nature of technical translation as a purposeful activity focusing on the intended addressee and the function of the target text.

**Chapter III** examines the structural, lexical and grammatical peculiarities of metrological texts and the main strategies of their equivalent rendering into the target language. This chapter is aimed at establishing the main principles of the technical translator's work at different text levels which make for an equivalent translation in case of their combined application.

**Conclusion** summarizes the main findings of the research.

